

ինչքան էլ նա թափանցիկ լինի, չէ կարող ծածկել այն հրեշաուր կերպարանքը որ ստացել է մեր հակառակորդների բանակը:

Նրանք այլ ևս չեն թագցնում, որ դեմ են ժողովրդին, նրա իրաւունքներին, նրա մասնակցութեան, նրա արտօնութիւններին: Նրանք սիտեմատիկաբար հալածում են ժողովրդին ամեն տեղից՝ դպրոցից, եկեղեցուց, բնտրողական դահլիճից: Այստեղ, որտեղ պէտք է թագաւորէ ժողովրդի ձայնը, փորձում են հնչեցնել կղերի ձայնը: Այստեղ, որտեղ որոշող պէտք է լինի ժողովուրդը, այնտեղ տէր է հանդիսանում կղերը: Ոչ մի տեղ ժողովուրդը, ամեն տեղ կղերը, — ահա մեր հակառակորդների դէմը:

Եւ ներշնչված այդ կղերական ոգով, ապաստան գտած կղերի փեշերի տակ, մեր կառավարմանը բանակը հրձիւմ է տեսնելով թէ ինչպէս մի որ և է վերադարձնում մի որ և է տգէտ հողերական, մի որ և է անխելք փարաջաւոր իրան թող է տալիս ուրի տակ տալ իրաւունքը, որհնչը, կարգն ու կանօնը, մտցնելով ամեն տեղ կղերի ուղի, վնասակար, դասակարգային վարակիչ ոգին:

Այդ կղերական ոգին հանդէս եկաւ ամենաբուն ոյժով Մակարի կաթողիկոսութեան օրով, բայց խորակվեց: Հանդէս եկաւ 1892 թւի կաթողիկոսական ընտրութեանը, — կրկին խորտակվեց: Նա, փրփուրը բերանին, հանդէս եկաւ բոլոր ժողովրդական ընտրութիւններին, — և էլ խորտակվեց:

Եւ միշտ էլ կը խորտակվի, դիպչելով այն հաստատ, վիթխարի ժայռին, որ կոչվում է ժողովուրդ, որի ձեռքում է նոյն այդ կղերի կեանքը և գոյութիւնը: Եւ ով մի բոպէ, մի վայրկեան անգամ մի քանի դժբաղդ փաստերի հիման վրա, կը կարծէ թէ կղերը կարող է երկար դիմանալ. — նա կամ տգէտ է, կամ ապուշ:

Մենք ժողովրդի հետ, դուք կղերի հետ: Մենք կղերի դէմ, դուք ժողովրդի դէմ. — ահա մեր և ձեր նշանաբանը:

Քանի տարուց աւելի է, որ մենք կռիւ ենք մղել այդ նշանաբանի տակ: Եւ այդ բան տարվայ ընթացքում, չը նայած որ էջմիածինը համարեա միշտ գանգիւ է մեր հակառակորդների ձեռքում, ուր նրանք բուն դրած փորձել են ոչնչացնել թէ մեր և թէ ժողովրդի ոյժը, — բայց միշտ յաղթութիւնը մնաց մեր կողմը:

Մենք կը շարունակենք սրանից յետոյ էլ կռիւ մղել այդ վարակիչ, կղերական ոգու վնասակար ձգտումները դէմ, և մի վայր-

կեան անդամ չենք կասկածում, որ յաղթանակը միշտ կը մնայ մեր կողմը, ժողովրդի կողմը:

ՕՐՎԱՅ ՀԱՐՅՈՒ
XV

Թիւրքաց ինտելիգենցիան... Հնարիւմ է, այդ բաները հնչում են շատ խորթ կերպով, շատերի վրա դա նոյն իսկ հեղինակն ապագայութեան կարող է թողնել մանաւանդ այժմ, երբ Թիւրքիա բաւր ուրի կերպ չէ հասկացվում, բայց եթէ անսահման սպիտակութիւն, անսահմ ընտելութիւն և անսպասան անշարժութիւն, բայց և այնպէս վատտերը ցոյց են տալիս, որ նոյն իսկ այդ անշարժութեան, այդ բռնութեան և սպիտակութեան մէջ փոքր առ փոքր սկսվում է կազմակերպվել մի ինտելիգենցիա թիւրք տարր:

Ճշմարիտ է, փոքր-Ասիայի, Արաբիայի, Եգիպտոսի և Վերիայի մասնատական ազգաբնակչութիւնը դեռ ևս չէ երկարակել եւրոպական քաղաքակրթութեան հոսանքին և մինչև այժմ այդ տեղերի մասնատական ազգաբնակչութիւնը գաղտնիք անդամ չունի եւրոպական մտաւոր շարժման մասին, բայց և Պոլսի թիւրք երիտասարդները, որոնցից շատերը ուսում են առնում եւրոպացում, արդէն դուրս են եկել այդ անշարժ, ֆանատիկոսական միջնադարով խեղդված շրջանից, որի մէջ ապրում է թիւրքաց հին սերունդը, և սկսել են փոքր առ փոքր թեքվել դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը:

Եւ ճնշոյց այդ շրջանից են դուրս գալիս այն փոքրթիւ թիւրքերը, որոնք անսահման տիրութեամբ են տեսնում, որ օսմանեան պետութեան մէջ տիրող անտանելի կարգերը թշուառացնում են ոչ թէ միայն պետութեան քրիստոնէայ թաղաքացիներին, այլ նոյն իսկ մասնատական ազգաբնակչութիւնը, և որ այդպէս շարունակելով թիւրքիան վերջ է վերջոյ կարող է հասնել վերջնական կործանման:

Անկասկած, փոքրթիւ թիւրք ինտելիգենցիան, որ սկսել է դաւանել բոլորովին նոր մտքեր, և միանգամայն այլ ձգտումներ ունի իր հայրենիքի վերաբերութեամբ, ոգևորված է ոչ թէ միայն եւրոպական քաղաքակրթութեան գաղափարով, այլ մի և նոյն ժամանակ բուն ազգային ոգով, և ճնշոյց այդ ազգային ձգտումն է, որ ճանդիտ չէ տալիս այդ ինտելիգենցիային, քանի որ նա պարզ տեսնում է, թէ օսմանեան կառավարութեան այժմեան ընթացքը կարող է վերջ է վերջոյ դրվել թիւրքերին, իբրև մի առանձին ազգութիւն, անկասկա գոյութեան բոլոր միջոցներով:

Սաղարկված են անհատի, միևնույն այս կամ այն դասակարգի, երրորդում ամբողջ ազգի և չորրորդում ընդհանուր մարդկութեան պահանջները, ցածրը, յոյսերը, իրէակաները...

Ահա թէ ինչու Շելլինգի «Մէլը դաշտում գիւղերը չէ» վեպը տասնամյակով բարձր է Գծնաչարի «Օբլոմովկայ», թէև Էկերմանի սրտակերտները կողմից վերջին վեպը սկսան չէ առաջինից: Ահա թէ ինչի ներկայումս մի «Парадизъ подвѣздъ»-ը արժէ Ֆէտի բանաստեղծութիւնների ամբողջ հատորին, ինչպէս որ Բաֆֆին, Գաւառ-Քաթիլիան արժեն մի քանի Պոպանցիները, ահա թէ ինչի համարմարդկային բարձրագոյն պահանջների ներկայացուցիչ Համլետը, Ֆաուստը դարերի ընթացքում չեն թառամում, ոգևորելով, կրթելով հազարաւոր սերունդներ, մինչդեռ նոյն Շելլինգի, նոյն Գէօթի, բովանդակութեամբ համեմատաբար թոյլ, այլ գրածները այդ յաջողութիւնը չունեն. վերջապէս ահա թէ ինչի ուս հասարակութիւնը իր ժամանակին սկսեց կամայկամայ ստուշել իր ֆալսիւթ Տուրգենևիկի և Գծնաչարի: «Չը նայելով որ Տուրգենևիկի և Գծնաչարի վերջին վեպերը իրանց գեղարուեստական արժանատիւութիւններով սրտիկա չեն այդ հեղինակների առաջին վեպերից, — դուռն է Ֆ. Բ. — այնու ամենայնիւ, ուս հասարակութիւնը դեպի «Սօվի», «Օբլոմովկայ» «Բուզիւնը», «Վոլոքական պատմութիւնը»:

Եւ այդպէս, գեղարուեստական տեսակետից հաւասար, բայց բովանդակութեամբ տարբեր բանաստեղծական գրածներովը նա, որ ամբողջում է կենսի տակ լայն հոսանքներ, պահանջներ, արժարժում աւելի խոր, աւելի բարձր

և ահա թիւրքաց ինտելիգենցիան, նոյն իսկ թիւրքերի ապագայի տեսակետից, նոյն իսկ թիւրքական հայրենասիրութեան տեսակետից՝ ձգտում է վերջ տալ այն անկարգ, վայրենի, բարբարոս քաղաքակրթութեան, որին հետևում է օսմանեան կառավարութիւնը, աշխատելով պոթման ֆանատիկոսութիւնը—Թիւրքիայի աւերակներ ի վրա կանգնեցնել օսմանեան նոր պատուութիւնը, քաղաքացիական և պետական հաստատօրէնքներով, որի սահմաններում ապրող ազգերը կազմված լինէին միմեանց հետ պետական համընդհանրութեան գաղափարով, ուր տիրապետէր կրօնի, խօսքի ազատութիւն, և աշխատանքի ապահովութիւն:

Եթէ թիւրքաց պոթման կառավարութիւնը չէ ընդունում հայոց հարցը, և միշտ այն կարծիք է, որ հայոց հարցը լուծել կը նշանակի անկախութիւն տալ հայերին, թող լինի զէթ մասնազանգութիւնը ինտելիգենցիային, թող ընդունի զէթ նրա ծրագրերը, մի ծրագիր, որ անկասկած, ամենից առաջ ի նկատի ունի թիւրք ազգութեան շահերը, քան թէ հայերի և ուրիշ ազգերի շահերը:

Ողջունում ենք Երիտասարդ Թիւրքիայի թող հաստատուած լինի թիւրքաց առաջադէմ, եւրոպական կուլտուրայի կողմնակից ինտելիգենցիան, որ թիւրքաց-հայերը մի բոպէ անգամ չեն տատանվի հայտնութեան ձեռք մեկնելու այն Թիւրքիային, որի նշանաբանը կը լինի բոլոր ազգերի հասասարկութիւն, առանց խտրութեան ցեղի և կրօնի:

Հայը թշնամի է բռնապետական թիւրք կառավարութեան, բայց ոչ թէ Թիւրքիայի վերածնութեան:

Խ. Մարտիան

ՀԱՅՈՑ ՀԱՐՅՈՒ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԱՆ ՄԱՍՈՒՐ

I

Նշանաւոր Բրայքը, Աբելլիցիում արտասանած իր ճառի մէջ, հետեւեալ կերպով է խօսել հայոց հարցի մասին:

«Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ միասին մեր մշակած հայկական ընթացիկ ծրագիրը շատ չափաւոր է, նոյն իսկ չափից դուրս չափաւոր է. մենք ուրախութեամբ կառաջարկէինք մի աւելի ազդու ծրագիր, բայց անհրաժեշտ էր ձեռք բերել երեք պետութիւնների համընդհանրութիւնը: Սակայն հոգ չէ, երբ արդէն մի անգամ սուլթանը ընդունեց այդ ծրագիրը, պէտք է լինի խիտ ճշում գործել Թիւրքիայի վրա և շարունակ հակել ընթացիկ գործարարութեան վրա, որպէս զի թիւրքերը հակաման, թէ վեր-

մաքեր, զգացմունքներ, — նա անհամեմատ աւելի բարձր, աւելի գնահատելի է և աւելի երկար է դիմադրում ժամանակի կործանիչ հարուածներին...»

Ոչ միայն այդ: Թող բանաստեղծական գրածքը գեղարուեստական տեսակետից լինի տաղանդաւոր, նոյն իսկ հանձնարել, բայց բովանդակութեամբ թոյլ և նա հերոսութեամբ կը մասնակի մտացութեան, կը մեռնի, ընդհակառակն, գեղարուեստական պահանջներին ոչ լիովին բաւարարութիւն տալու, բայց մաքերի, զգացմունքների կողմից թաթուրութեամբ, կենդանութեամբ չնչոյ գոտարարութիւնը ոչ միայն կարողանում է երկար ժամանակ ոգևորել, դիմել ընթացիկներին, այլ և յաճախ անմահութիւն ձեռք բերել: Ռուսաց հեշակաւոր կրթիկոս Բելինսկու կարծիքով Պոպկինի «Բոլոքիս Գոլոնովի» տակ չէր հրաժարվի ստորագրվելու ինքը բանաստեղծների թագաւոր Շելլինգի շրջանում իրանց թիւրքիւններին, ընկանտութեան դէմ մեղ-տեղ մեղադրելուն, շարունակում մեծ գաղափարներ, շնորհիւ այն լայն և վեհ գաղափարներին, բուն գեղացմունքներին, որ հեղեղում են այդ վեպերը:

Եւ այդպէս, Գծնաչարի շարունակ վստովում է, հաւաստացնելով որ բանաստեղծական գրածքը բովանդակութիւնը ոչինչ նշանակութիւն չունի, միայն թէ նա բաւարար լինի գեղարուեստական տեսակետից: Աւելացնենք և այն, որ Գծնաչարի

ջին 17 տարիների քաղաքակրթութիւնը այլ ևս անկարելի է տանել»:

II

Վիեննայի լրագրները հաղորդում են, որ Բ. Գուռը մի նոր խաղ է հնարում Եւրոպային խաբելու համար: Նա մտադրութիւն ունի նշանակել մի մեծ յանձնաժողով, որի անդամները պէտք է լինեն օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները — յոյներ, հայեր, քիւրդեր, սասորիներ, թիւրքեր, չէրեքներ և այլն: Այդ յանձնաժողովը իր թէ պէտք է մշակէ օսմանեան վարչութեան վերանորոգութեան համար մի ընդհանուր ծրագիր...»

III

Կ. Պոլսից գրում են հետեւեալը: «Այժմ յայտնվում է, որ Էրզրումի իտալական հիւպատոս Մոնակոն, գաղով Կ. Պոլսի, ներկայացրել է դեսպանին մի ահազին գեղուցադիր Հայաստանի գործերի մասին: Այդ գեղուցադիրը անձնական և անկախ ուսումնասիրութեան արդիւնք է, որ կատարել է հիւպատոսն անցեալ տարվայ գեղուցադիր մասին սկսած:»

«Հիւպատոսը հաստատում է, որ իր ուսումնասիրութիւնը և քննութիւնը աւելի ճշգրիտ և մանրամասն է, քան Մոնակոն քննիչ յանձնաժողովի քննութիւնը: Այդ գեղուցադիրը այնքան կարեւոր է, որ դեսպան կատարելի հարկ է համարել տանել Հոռոմ իտալական արտաքին գործերի միջնորդ բարձր Բլանկի ներկայացնելու համար:»

«Խալիսան առաջարկել է իր աջակցութիւնը Անգլիային այն պարագայում, երբ վերջինս հարկաւոր համարի մի ծովային ցոյց անել Թիւրքիայի դէմ: Խալիսան խոչընդոտում գրաստարները կը միանան անդլիսական գրաստարներին և թնդաւորներ կարձակեն Գարգանէի մուտքում, որպէս զի նրանց ձայնը հասնի մինչև Իզմիրը պալատը:»

IV

Լոնդոնից «НОВОСТИ» լրագրին հետագրում են, որ Գաղափարը ընդունեց հայկական պատգամաւորութիւնը և խոստացաւ նրան իր գործակցութիւնը:

V

Լոնդոնից հետագրում են, թէ լուր է պտտում, որ չուսով Կ. Պոլսից յետ է կանչվելու բրիտանական դեսպան սըր Կերրի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵՂՈՒՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ԿԱՌԱՌՈՒԹԻՒՆԸ

Նորերս վրաստանի և խմբէթի դպրոցների թեմական տեսուչ Մեղեանը գրաւոր կերպով

կարծիքի անհեթեթութիւնը սկսել են խոստովանել նոյն իսկ նրա համախոհները:

Ահա թէ ինչ է գրում տիրապետի կրթիկոս Բուրբուրի. «Հիմնական բեկբերութեանը, ստում է նա, ինչպէս յայտնի է, մի հիանալի սովորութիւն են ձեռք բերել, այն է—նկարագրել ամեն ինչ, որ իրանց գլխին փչում է, առանց որ և է մտքի, իրիցայի, յաճախ նոյն իսկ առանց որ և է կապի, մի այն թէ է լինի իրական ու լեզու և կենդանի ու ճշգրիտ նկարագրել: Գօգօլը, Տուրգենևիկը, Գոստօվսկիի և Տօլստոյը իրանց գրածներում մէջ այդպէս անմիտ կերպով չէին նկարագրում իրականութիւնը, այլ կենսիկ երեւոյթները գառաւորում էին այնպէս, որ նրանց գեղարուեստական նկարագրութիւնից ընթացողը կարողանայ հակամարտ այդ երեւոյթների ներքին խորհուրդը, իրէանս:»

Եւ այդպէս, գեղարուեստական երկից մենք պահանջում ենք լուրջ բովանդակութիւն, մըտք, գաղափարներ, զգացմունքներ, որովհետեւ ինչպէս Գօգօլը իրաւունք անմիտ կերպով կողմնակից գրածներին անհրաժեշտ սեփականութիւնը, որովհետեւ ամենահանձնարել գեղարուեստական նկարագրութիւնը անմիտ բովանդակութիւն ունեցող գրածքը չէ փրկում: Բարեբաղդաբար, տարանջրը, հանձնար չէ կարող միայն դաւաճան անմիտ գրածքը տալ հարցը միայն համեմատ որպիսի դէպքում տաղանդի կամ հանձնարի գեղարուեստական երկը քիչ ազդեցութիւն է ունենում:

Շիրվանջի

յայտնեց թիֆլիսի վերախօս Նախկին թաղի հայոց դպրոցի վարչութեանը, որ կողմանի հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը որոշել է 1897 թվ. յունվարի 1-ին այլ ևս չը տալ այն 300 բուրջի նպաստը, որ ուսումնարանը ստանում էր իր բացման օրից: Ընդհանուր իմաստով կրթության հարցը վերաբերում է նախկին ևս նույն ժամանակի ևս նույն ժամանակից, նույն վիճակի ևս նույն ժամանակից: Նախկին վարչությունը, այն է՝ Չխար և Սալիեյեթի գեղերի դպրոցները: Մի խօսքով, Բարեգործական ընկերութեանը իր գոնեքը գոյություն է համարեա թէ նրա միջոցներով պահվող երեք դպրոցի առաջ:

Թէ որքան պատեհ է այդ տեսակ կարգադրութիւնը ընդհանրապէս, և մասնաւորապէս Նախկին թաղի դպրոցի համար՝ այդ մասին մի քանի խօսք ենք ուզում ասել:

Երեք դպրոցն էլ վերախօս, ուրեմն օգնութեան արժանի տեղերուն են, երկուսը գիւղում, երրորդը թէև քաղաքում, բայց համարեա թէ գիւղական ազգաբնակչութեանը: Եթէ այդ տեղերի ընտանիքները չքաղաքը չը լինէին, ստիպված էլ չէին լինի գիւղում Բարեգործական ընկերութեանը: Իսկ այժմ երբ նպաստը կտրվում է, ինչ աղբիւրներով պիտի պահվին դպրոցները: Նախ այս մի քանի տարվայ մէջ նրանց անուսական վիճակը այնքան չէ բարւոյն, որ նրանք նպաստեն ուսումնարանին: Երկրորդ՝ այդ դպրոցներում այնքան աշակերտներ չեն հաւաքվի, որ թոշակադրումով պահվի դպրոցը և եթէ լինեն էլ, մեծ մասամբ չքաղաքներ կը լինեն: Երրորդ՝ գիւղական եկեղեցիները միջոց չունեն, որ օգնեն ուսումնարանին: Եւ չորրորդ՝ եթէ գիւղացիք ապահով լինեն ու ցանկանան համախօսակամով նպաստել ուսումնարանին, այդ էլ չեն կարող անել, կողմանեան կատարարապետի վերջին շրջաբերականի համաձայն: Ուրեմն, ինչպէս տեսնում էք, ամեն տեսակ աղբիւրներ ցամաքված են այդ նորաբաց դպրոցների համար:

Բարեգործական ընկերութեան այդ որոշումը պատճառաբանված է նրանով, որ չէ կարելի մի և նոյն դպրոցին նպաստ տալ անվերջ կերպով: Գլխաւոր նպատակը ընկերութեան պիտի լինի՝ նպաստել նորանոր դպրոցների բացման: Շատ լաւ: Բայց միթէ խելացի է նոր արմատ գցած ծաղիկները չորացնել (Նախկին թաղի դպրոցը այս տարի տուեց անդրանիկ շրջանաւարտներ) որպէս զի ուրիշ տեղ նրա նման ծաղիկ սերմ ցանվի: Կա ինքնախաբէութիւն է:

Յուսով ենք, որ այդ հարցը կը պարզեն նաև Սալիեյեթի ու Չխարի դպրոցների վարչութիւնները:

Վերադառնալով իր ստանդարտին, որ արդէ իսկ յոգնված է մէկ ու կէս ամիսն ստանալիք ուսնիկը:

Ժողովականների համբերութիւնը սպասվելով ունենալ յայտարարեցին ժողովը անվաւեր, հիմնադրութեան վերաբերյալ, որ ասում է. «Ընդհանուր ժողովի նախագահ ընտրում են ընդհանուր ժողովին մասնակցող անդամները ձայների բազմութեամբ և գաղտնի քուէարկութեամբ»: Միայն իրաւանցումը և նախագահի անասման բարկութիւնը այն անձանց դէմ, որոնք համարձակվեցին ինքնակոչ նախագահի վարժուհիք դէմ բողոք յայտնել: Ունենալ այնքան զայրացան, որ լաւ համարեցին հեռանալ ժողովից:

Նախագահը դարձեալ համարեց ժողովը կանոնաւոր և հրամայեց սուրբերը դնել վարչութեան անդամների քուէարկութեան համար: Հրահրում ենք այս եղբայրների վրա ում հարկն է ուշադրութիւնը և յուսով ենք, որ այսպիսի ապօրինի և փառայական արարմունքներ այլ ևս տեղի չեն ունենայ քաղաքային վարչութեան հիմնարկութեան մէջ:

Անդամներից մէկը

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅՑ

Յունիսի 21-ին

Երէկ քաղաքում լուր տարածվեց, որ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան եկել է Բագու: Արագանը եկել էր յանկարծակի, ոչ զբին իմաց չը տարով:—բայց և այնպէս նրա գալու լուրը տարածվեց, և նրա յարգողներին շատերը շատ պեցին նրա այցելութեան:

Արիստակէս եպիսկոպոսը իջնանել էր մի քանի օրով Բագու, շատ կարճ ժամանակ այնտեղ հանգստանալուց յետոյ, գիշերվայ ժամը 1-ին «Князь Барятинский» շոգենաւով ձամապարճ ընկաւ Լեւոնքորան, ուր գնում է հանգրային ջրերից օգտվելու և հանգստանալու:

Մենք էլ սուրբ ունեցանք տեսնելու սրբաշահին: Արիստակէս եպիսկոպոսը այստեղ իմացաւ, որ նշանակված է Աստրախանի թեմի առաջնորդ: Ինչպէս երևում է, առաջադրութիւնը արված է եղել, առանց նրան այդ մասին յայտնելու:

Արագանը մտադիր է ջրերից վերադառնալ օգոստոսի վերջերս, նախ կերթայ Էջմիածին, և այնտեղից կուղևորվի Աստրախան:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յունիսի 20-ին

Արագանը Արիստակէսի ժամանակների գրասենեակը, ուղարկելով ներքակեալ 200 բուրջի, խնդրում է այս գումարից 50 բուրջի յատկացնել յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի, իսկ մնացեալ 150 բուրջի ուղարկել ի նպաստ որ և է աղքատ ուսումնարանի, ձեր հայեցողութեամբ:

Գր. Վարչապետան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յունիսի 18-ին

Ինքուրում եմ «Մշակի» մտտակայ համարներից մէկում տեղ տաք իմ հետեւեալ բացատրութեանը:

«Մշակի» № 67-ի մէջ, թղթակից Արցախեցին, խօսելով Ղարաբաղի թեմական դպրոցի տարեկան հանդիսի մասին, գրում է, ի միջի այլոց, հետեւեալը. «Տեսուչ Ե. Մաղաթեանը կարգաց մի երկար հաշիւ, լի անհեթեթի դրպարութիւններով դէպի նախկին ուսուցչական խումբը»:

Այդ տողերը կարդացողը կը մտածէ, թէ ո՞վ գիտէ ինչ անասելի դրպարութիւններ տաք, որ արած չը լինեմ ես՝ իմ հայուսուութեան մէջ՝ նախկին ուսուցչական խմբի մասին... Բացարձակապէս յայտնում եմ, որ արդարեւ ես՝ շատ կէտերում նպաստաւոր և մի քանի կէտերում աննպաստ կարծիքներ ունեմ, նախկին ուսուցչական խմբի գործունէութեան մասին, բայց իմ տարեկան հաշիւաւորութեան մէջ ասելու որք եմ համարել առաջ բերել այդ կարծիքները: Ես կամեցել եմ, որ ֆակտերը իրանք խօսեն, այդ պատճառով նոյն իսկ նախկին ուսուցչիներին անուանացուցակը ես հանել եմ նախկին տեսուչ Լ. Սարգսեանի գործերից, առանց որ և իցէ կօմենտար աւելացնելու:

Ես համարում եմ, որ այ. Արցախեցուն դուր չեն եկել գրադարանապետի և ընտրատեմական ժողովածուի ու ֆիլիքական թանգարանի վերահաստի հաշիւները, որոնք երևան էին հանում նախկին գրադարանապետի և ընտրատեմական ժողովածուի վերահսկողի գործունէութեան մի քանի թույլ կողմերը, բայց այ. Արցախեցին անշուշտ լուր էր, որ ես կարողում էի այ. Թարխանեանի և Հասան-Ջալալեանի՝ ինչ ներկայացրած զեկուցումն երբ: Եթէ այդ զեկուցումները մէջ թղթակիցը սխալներ, դրպարութիւններ է նկատել, թող յիշէ և ապացուցանէ, որ ինչ մտղերեղը են յիշեալ պարունները: Ես էլ իմ կողմից հրապարակով ներողութիւն կը խնդրեմ, որ դուր եմ ձանձրացրել այդ զեկուցումներով հասարակութեան ուշադրութիւնը:

Այս բացատրութիւնից յետոյ, կարծում եմ, որ այ. Արցախեցին նորից հանդէս կը գայ՝ ստոյգ և անհերքելի փաստերով սպասողինս: Սպասենք:

Տեսուչ թեմական դպրոցի Ե. Մաղաթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միթէ «Կարախանի» վլատակների տակ մնացած զոհերն էլ մի փոքր չեն ազդի մեր քաղաքային վարչութեան ստառ ջղերի վրա: Ճշմարիտ, մենք չենք հասկանում, թէ ինչ են մտածում մեր քաղաքային ինքնավարութեան ղեկավարները: Անդառար, մէկը միւսի ետեկց աներ են փլվում, բազմաթիւ մարդիկ թաղվում են աւերակների տակ:—Իսկ մեր քաղաքային վարչութիւնը և ոչ մի քայլ չէ անում, իր հակողութիւնը սաստկացնելու համար, կարծէք այդ բողոքը կատարվում է ոչ թէ թիֆլիսում, այլ Չիւսաստանում կամ Աֆրիկայում:

Մեզ հարցրում են, որ վեհախառն կաթողիկոսը, համաձայն թիֆլիսի թեմի առաջնորդի միջնորդութեան յունիսի 7-ին մի կանոնակ է տուել Մ. Եկեմալեանին, որով նրան թույլ է տալիս տարաբեր իր ներդաշնակած պատարագի արարողութիւնը՝ հայոց եկեղեցիներում տարածելու համար, օրհնում է նրա օգտակար ձեռնարկութիւնը և յարգում է հասարակութեանը դրամական նպատակ օգնել Եկեմալեանին՝ լոյս ընծայելու իր աշխատութիւնը: Թիֆլիսի հայերը, որոնք սուրբ են ունեցել լուրու Եկեմալեանի ներդաշնակած պատարագը՝ անշուշտ կը շատան նրա թեմական օգնութիւն ցոյց տալ՝ այդ զեկուցիկ ձեռնարկութիւնը գլուխ բերելու համար, որով կանոնաւոր ու ներդաշնակ երգեցողութիւնը հետզհետէ կը տարածվի հայոց բոլոր եկեղեցիներում:

Երէկ «Արձագանքի» մէջ տպագրված էր Լալի Գիւլունի մի մասնաւոր նամակը, որը վերաբերում է մի ինչ որ «չիտնաչալի» պատմութեան, որը, յարգելի թղթակիցը, թիֆլիս եղած ժամանակ, գնել է մի ինչ որ հայ վաճառականից: Ամեն մի վաճառական, ի հարկէ, կատարեալ իրաւունք ունի դրապիւլ «չիտնաչալի» հարցով, բայց մենք երբէք չենք կամենալ Գիւլունի նման մի մարդու անունը կապված տեսնել այսպիսի «պատմութիւնների» հետ: Եւ այդ պատճառով հետաքրքրական է իմանալ, արդեօք Գիւլունի այդ նամակը գրելով, իրաւունք է տուել իր մասնաւոր նամակը տպագրել, թէ ոչ: Նամակը ուղղած է բժ. Բ. Նաւասարդեանին, և նրա պարտքն է այդ հարցը պարզել:

Պետերբուրգի լրագրիչները հարցրում են, որ մտադրութիւն կայ կողմանեան հանգրային ջրերը յանձնել մի ֆրանսիական ընկերութեան, որ շահագործում է «Վիշի» հուշակաւոր ջրերը: Այդ սուրբով պետական կառուածների միջնորդութիւնը այժմ բանակցութեան մէջ է մտել այդ ընկերութեան հետ: Կողմանեան հանգրային ջրերը պէտք է տրվեն ընկերութեան 50 տարի ժամանակով:

Մեզ ուղարկված է նոր լոյս տեսած մի գիրք, «Պատմութիւն մանկավարժութեան» վերնագրով, որ կազմել է Գրիգորիս Երզնկացի, օգտվելու եւրօպայի և ուսուցող մանկավարժների աշխատութիւնից: Գրքը վերջում կայ մի գլուխ, նուրբ ված հայոց դպրոցների պատմութեան:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են. «Հաստատ աղբիւրից լսեցինք, որ Արզվիւնում այս օրերս կատարվել է մի եղանակգործութիւն: Քաղաքից աննշան տարածութեամբ հեռու գտնվող Վիլքառ արուարձանում ընակվող մի կին, տեղական յիւսեր սովորութեան համաձայն իր ձակառը ոսկիներով դարգարած, երեկոյեան քաղաքից դէպի իր բնակավայրը գնալիս կէս ձամապարհին նրա վրա յարձակվում են անյայտ չարագործներ, ձակառից ոսկիները պոկում և սպանելով անհետանում: Ոստիկանութիւնը ընտրութեան է երկար կել մի քանի թուրքեր»:

ՇԱՄԱԽՈՒՅ մեզ գրում են. «Այստեղ մեծ հետաքրքրութեամբ կարգացվում են «Մշակի» Կ. Պօլսի թղթակցութիւնները՝ երեք աստղ ստորագրութեամբ, Լճորացու նամակները Անգլիայից և «Օրվայ հարցը» վերնագրով յոգուածները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳՂԻՍՅՈՒՅ

Լ օն 9 օն, յունիսի 14/26-ին

Գրելու այնքան նիւթ կայ, որ չը գիտեք թէ յիբաւի ինչից սկսենք:

Բողբէրի միջնորդութիւնն ընկաւ, Սոլիսիւրին ձեռք առաւ կառավարութեան ղեկն այն պայմանով, որ թագուհին երաշխաւորէ, թէ օգոգիցիան բիւջէն կընդունի Սոլիսիւրի ուզածի համեմատ: Տասն օրից յետոյ կարձակվի ստրաւմետը, նոր ընտրութիւններ կը լինեն օգոստոսին:

Անշուշտ հայոց հարցը ուրիշ ընթացք կանուի, կամ բողբուլին սուր և դրական, և կամ թէ մի կողմ կը թողնվի: «Standart» լրագիրը, որ պահպանողականների օրգանն է, երէկվայ համարում յայտնում է, որ անհիմն է այն կտակածը, թէ սուրբախի խրատաւորը Գերմանիան է: Յօդուածագիրը կարծէք Ռուսաստանի վրա է աննարկաւ, նրան համարելով թիւրքիայի ծածուկ լըրախաւորը: Գիտէք, որ Անգլիայում երբ կատարութեան ղեկն անցնում է պահպանողականներին, նրանց ատելութիւնն էլ նորից սկսվում է դէպի Ռուսաստանը: «Standart» ստում է՝ հասել է ժամանակը, որ վերջ տրվի քրիստոնեաների պահանջին: Ոչ մի խոստում լրագիրը առանց գրաւականի չէ ընդունում: «Daily News» լրագիրը կամակ է յայտնում հայոց հարցի աջող վերջանալու մասին:

Այսօր տեսակցութիւն ունէի Լալի Գիւլունի հետ «National Liberal Club»-ում: Վաղը Գիւլունի պէտք է տեսնվի Սոլիսիւրիի հետ:

Ղեկագիրը հարցրած կը լինի ձեզ Մակեդոնիայի բռնած զիջքը դէպի թիւրքիան: Նամակը ձեզ ուչ պիտի հասնի, այդ պատճառով աննպասակ եմ համարում տեղեկութիւններ և լուրեր հարցրել:

Մօտիկ ծանօթացայ անգլո-հայկական ընկերութեան գործունէութեան հետ: Տեսնվեցայ այստեղ մի քանի հայերի հետ, ի միջի որոց և Միւնաս Չէրապի: Պիտի տեսնվեմ Յակոբեանի, Թուրքեանի, անկախաւոր Ներսիսեանի հետ: Կը գրեմ իմ տեղեկութիւնները անգլո-հայկական ընկերութեան և իմ սպաւորութիւնը այստեղի հայերի մասին: Եթէ հիստորիկէք, մեղաւորը ինչ չը համարէք:

Այստեղ են Պատտի, Սարա-Բէրնար, Գուզէ, Չէմբրիս: Այս տարի բաւական չղբեր է անում Լճորցունում:

Ա. Նաղարեկի բրօշուրը, որին «Новости» լրագիրը մի յօդուած էր նուիրել, այստեղի քաղաքական շրջաններում ուշադրութեան է առնված:

S. Նաղարեանց

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՅ

Սամսուն, 14/26 յունիսի

Եւգօկից մէջ, Գեօքիլի-Պաշի կոչուած տեղը մի թիւրքի այգիի մէջ 8—10 թիւրք սրկիաներ արեցողութեամբ դրաւած ժամանակին, այդ կողմէն երեք հայեր շրջապայելու ժամանակին, թիւրքերը կը տեսնեն հայերին և սպանական եղանակաւ կը հրամայեն, որ իրենց մասնակցեն, «սազ» (նուազ) դարնեն ու իրենց ուղարկանեն: Այդ հրամանների հետ մէկտեղ ալ կը յայտնեն

իրենց դիտարկութիւնը այդ օրը անսպասելաբար մի քանի հայր արիւն թափելու: Հայերը երեք հօգի լինելով երբէք մտիկ չեն տար և բաւական մարտակէ յետոյ օձիքնին կազատեն ու կը հեռանան:

Մի քիչ յետոյ կանցնի ընդ կընդ-խանցի (այժմ թօգաթ ընակող) Մէնօյի օրդի Յովհաննէսը: Թիւրքերը տեսնելով որ մենակ է, կը կանչեն, որ իրենց սաղ ածէ ու զուարճացնէ: Յովհաննէսը կարտորութիւն չը տալ ձեռնցնելով իր ճանապարհը չը չեղեր. թիւրքերը զայրացած իր յարձակին նրա վրա, դանակի հարուածով մը լեղզէին գոլկը կը ջախջախեն և մի ուրիշ հարուածով աջ թիւր սաստիկ կը վիրաւորեն:

Ամբողջ քաղաքի հայերը աղեկոծութեան մէջ կիջնան. կը դիմեն կառավարութեան բողոքելու: Տեսազեր կը պատրաստեն պատրիարքարան և սուլթանին հեղակալը կաղաչէ, կը պաղատի, որ այդ դիտարկութիւնն յետ կենան, ինքը կը ձեռքալալէ ոճրագործները ու կը պատժէ արժանաւորացէս, բայց միայն երկու հոգու կը բանաւորի: Միւսները... փախեր են, փախցուցեր են, ինչ են եղեր, յայտնի չէ:

Կիմանանք, որ Սեբաստիոյ գիւղերից մին էլ աւերակ դարձած է թիւրք խուժանի և կանօնաւոր զօրքերի յարձակման տակ. մանրամասնութիւնները մեզ յայտնի չեն:

Մարզումցի յայտնի դաւաճան հաճի կարասեա Արաւանեան, իբր վարձատրութիւն Պոլիս տարուած մի ժամանակ օտարական պաշտօն վարելէ յետոյ, վերջերս Բ. ստորկանապետի պաշտօնով Մարզումն եկած էր:

Տեղացի հայեր ոխ պահած պատրաստութիւն տեսած էին զայն սպաննելու համար, բայց չուտ իմացած լինելով իրեն համար լարուածը՝ փոխադրուեցաւ Մուշ նոյն պաշտօնով: Մշեցիներն և բոլոր հայ հասարակութիւնը զգոյշ պիտի լինեն և երբէք չը հաւատան նրան:

Վերջերս ձեռքալալով 5 անձերը անպարտ արձակվեցան՝ չորս-չորս ամիս միայն բանտի մէջ անիրաւ տեղը սպաշխարիէ յետոյ:

Պաֆրա ալ տեղի ունեցած ոճրագործութեան առթիւ սպաննողի տեղ 3-4 անմեղներ բանտարկուած են առանց ո՞ր և է մի ասղացոյցի: Պաֆրայի կառավարութիւնը այժմ մի գիւտ գըտած է քաղաքը յետադիմական շարժման չեն-թարկելու համար. այդ գիւտը շատ հրաշալի է: Նա շատ ժամանակներից է վեր տեղացի դարձած մարդոց սքսորում է ամեն մէկին իր հայրենիքը, որպէս զի Պաֆրա մարտի վնասակար մարդոցմէ: Գիւտ չէ, ապա ինչ է:

Ս—ցի:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ճրամստական «Sémaphore» լրագիրը հարորում է, որ գերմանական Վիլհելմ կայսր ուղարկել է իր «մեծ բարեկամ» սուլթան Աբդուլ-Համիդին մի հեռագրով և հաղուսապիտ նուէր, —այն է երեք պատերազմական չներ», որոնք հիանալի կերպով ստիպել են հեռագիրներ և նամակներ փոխադրել:

Սակայն Արքիմիտրոսը հասած ժամանակ հետ-րից մինը փախաւ. և այլ ևս անկարելի եղաւ բռնել նրան, իսկ մնացած երկուսը անվտանգ հասան Կ. Պոլիս և այժմ իրանց հաշտցնելով լցնում են իշխիզի պալատը:

Ինչու շտիրացու արանքը կոչվում է շտիրացու արանք, հարցնում է մէկը տիրացու —աչկերտներից: —Որովհետև առանց ընծայի չէ կարելի այնտեղ մտնել, պատասխանում է տիրացուն, և այդ պատճառով էլ կոչվում է ընծայարան:

“ՄՇԱԿԻ” ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՅՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 22 յունիսի: Պետերբուրգ հասաւ բոլորական պատգամաւորութիւնը 8 անձիքը: Ներքից, միտրոպոլիտ Վիլհելմի գլխավորութեամբ: Պատգամաւորութիւնը իր հետ բերել է պատկի 3 հար հանգուցեալ կայսր Ալեքսանդր III-ի գրեթէմանի վրա դնելու համար: Պատկը կը դրվի յունիսի 23-ին, թագաւոր—խաղաղարարի հոգեհանգստի ժամանակ: Պատգամաւորութիւնը կը մնայ Պետերբուրգում մօտ 10 օր: 10-րդին, 21 յունիսի: Այսօր ուխտանի աղում:

բում լորբ Բոլքերի յայտնեց հետեւեալը. քաղաքական դրութեան հիմնական գիծն այն է, որ առաջիկայում ունիօնիստների խումբը կը լուծվի պահպանողական կուսակցութեան մէջ. սրանից յետոյ կուրը կը շարունակվի միայն երկու մեծ կուսակցութիւնների մէջ, այն է սորինների և ազատամիտների մէջ: Ազատամիտները այժմ իրանց գլխավոր նպատակը պէտք է դնեն լորբերի ժողովը վերանորոգել, ի հարկէ, բայց չը թաղնելով ազատամիտ ծրարքի ուրիշ կէտերը:

ԲԵՐԼԻՆ, 22 յունիսի: Վիլհելմ կայսրը այսօր առաւօտ կից ճանապարհ է ընկնում Ստոկհօլմ: Վիլհելմ, 21 յունիսի: «Neue Freie Presse» լրագիրն Բէլգրադից հարգում է, որ սերբիական կառավարութիւնը մի կօմսար և մի քանի օֆիցերներ ուղարկեց, թիւրքաց իշխանութիւնների հետ միասին, միջոցներ ձեռք առնելու սահմանի վրա:

ՍՏՊԵՏՊՈՂ, 22 յունիսի: Բոլշակովսկի կառավարութիւնը դիմեց մեծ վիզիրին հետեւեալ հարցադրութեամբ: Ֆիշը է, արդեօք, որ Արքիմիտրոսը իր զօրաբանին հրամայեց է սահմանի վրա որ և է անցը պտտահած դէպքում՝ անցնել բոլորական հողի վրա: Մեծ վիզիրը, հերքելով այդ տեղեկութիւնը, աւելացրեց, որ սահմանային կառավարութիւնը խաղաղապէս դպացմունքներ ունի դէպի Բոլշակովսկի:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՏՐԱՊԵՉՈՒՆ, Գ—ին. Անկարոյ ենք ստաղբիկ ձեր յօրուածը Այվաղեան վարդապետի ինքնասպանութեան պատճառների մասին:

ԵՐԵՎԱՆ, Ա—Գօ. Շատ ցաւում ենք, որ ձեր նամակները անկարող ենք ստաղբիկ:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՆԻՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-Ա.ՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՐՈՎԱՆՍԱՅԻ ԶԷԹ ՅԱՅՏՆԻ ԿԵՕԼԵՐԵԱՆ

պատրաստված Նիցցայում, առանձին ցուցմունքով, ծախվում է ԱՍԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ Նշանաւոր առեւարակների մօտ:

Այդ ձէթը միայն պատրաստվում է մաշիսին և միայն թարմ հաւաքված, կատարելապէս հասած և ընտիր ձիթապտուղներից: (№ 71) 1—2


ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԵՐԻ



Ր Օ Յ Ա Լ Ն Ե Ր



Դ Ա Շ Ն Ա Մ ՈՒ Ր Ն Ե Ր



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ: ԿԻՐԱՆԵՐ, ՖԻԼԵՏՏԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՅՆԱԻՍՆԵՐ, ԼԱՐՐԵՐ ԵՒ ՍՅԼՆ, ԵՒ ՍՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս:

Ն Ո Ր - Պ Ի Ե Ս Ս Կ ՈՒ Ր Ա Ն Տ Ն

ուղարկվում է ձրի: ԵՐԱՃՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՅՆԱԻՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Է Պ Օ

Մատակարար կայսերական Երաժշտական ընկերութեան

Музыкальное депо В. М. Мириманиана, ТИФЛИСЬ, Дворцовая ул., д. Т. Д. 3. Банка. (№ 35) 3—20

ԿԱՐ ԱՆՈՂ ՄԻ ԿԻՆ ցանկանում է Աբաթուցի կամ Բորթոմ ամառանոցը զնացող մի ընտանիք մտնել: Ցանկացողը կարող է դիմել այս հասցեով: Անչիխասի փողոց, Պարոկի տուն, № 22: (№ 69) 2—3

ԼՈՒՄԱՅ

ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Վ.Է.Պ. ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Գին է 60 40Պ.

Գինը այս հասցեով Тифлисы, Типография Главного начальствующаго, Сергѣю Назарьянцу, Թիֆլիսում վաճառվում է նաև կենսաբանական և Չ. Գրիգորեանցի կովկասեան գրավաճառանոցներում: (№ 64) 2—5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԵՆԱԻՍՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

“ՄԵՍԱՃԵՐԻ ՄՍՐԻՏԻՄ” — MESSAGERIES MARITIMES

Առաջիկայ շաբաթ, յուլիսի 1/13-ին, մեկնելու է Բաթումից սոյն ընկերութեան «Cambodge» շոգնաւոր դէպի Կ. Պոլիս, Մարսէյլ, Հալը և Լոնդոն:

Ցամախներ՝ ուղղակի հաղորդակցութեան միջև Գարիզ, կարելի է ստանալ Թիֆլիսում՝ պակասքրած գներով:

Նոյնպէս արտասահման պարանքներ փոխադրելու մասին հարկ եղած տեղեկութիւնների համար, դիմել սոյն ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Պուլպուօ-ին, Գիօրցօվայա փողոց, քարվանսարայ նախկին Արծրունի № 127. 1—1

ՄԻ ՈՒՍԱՆՈՂ

ցանկանում է դասեր ունենալ Թիֆլիսում: Տեսնել կարելի է առաւօտեան ժամը 8-ից մինչև 11-ը, իսկ երեկոյեան ժամը 2-ից մինչև 6-ը: Հասցէն՝ Большая-Кривая № 3, Տէր-Միքայէլեանց: (№ 65) 3—6

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԳԵՐԱԶԱՆՑ ԿԻՐ

որը արտասովոր սպիտակութիւն ունի և մեծ ամրութիւն ու խնայողութիւն է տալիս շինութիւններին, ծախվում է վազմենքով Թիֆլիսի երկաթուղու կայարանում, պուրը 19 կօպէկով:

Գինը ինժեներ ԼԵԱՎ.ԳԻՆՍԿԻՆ. Բոլշայա Վոլոդիմիրայա, տ. № 24, տուն 1, աւելի: (Ե.—№ 50) 8—10

Ն Կ Ա Ր ՈՒ Մ Ե Մ

Ատրասի վրա ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ԲԱՅՅԻԻ պատկերները և զանազան տեսարաններ՝ բազմից բարձի երեսի համար՝ 3—5 ռ., լուսամտիկի մետաքսեայ կտորների վրա նկարված 6 հայ գործիչների պատկերներով 3 ռ., մետաքսեայ թաշկինակներ յայտնի հայ գործիչներով 60 կ.—1 ռ., ժայռակներ (զրբանշան) վերջիշաղ պատկերներով 20, 25, 30 կօպէկ: Ցանկացողները կարող են ստանալ ինժանից: Հասցէն. Малая Ванкская у. д. Мурадова № 7. А. Родионовой. (№ 65) 6—6

“ՄՇԱԿԻ” ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը

- | | |
|--|--------|
| 1) ԷՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու | 50 կօպ |
| 2) ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու | 20 “ |
| 3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուճեանի | 50 “ |
| 4) ՍԱՍՈՒՆ, Ա. Բալանթարի | 20 “ |
- Օտարաբաղաբացիները կարող են վճարել փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով: (№ 59) 6—10

ՄԻ ՎԱՐԺՍԻՉԻ

կամենում է դասեր ունենալ Ֆրանսերէն, հայերէն և ռուսերէն լեզուների և ՄՈՒԶԻ ԿԱՅԻ, 7-ից մինչև 10 տարեկան երեխաների հետ: Համաձայն է և ամառանոց գնալ հայ ընտանիքի հետ:

Հասցէն՝ Солдатский переулокъ, домъ № 9, Михаила Барнова. Спросить учительницу. (№ 56) 3—3

Լոյս տեսաւ

Ի Վ Ա Ն Տ ՈՒ Ր Գ Ե Ն Ե Վ Ի

“ԱՐԶԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ”

(Стихотворения въ прозѣ)

Աշխատութիւնը

Թարգմանեց՝ Ա.Լ.ԲԱՍՆԻՐ ԵՍՏՈՒՐԵԱՆ

Գինն է 50 կ. ճանապարհածախով 60 կ.:

Ցանկացողները պէտք է դիմեն Թիֆլիս, Կենտրոնական գրավաճառանոցին կամ թարգմանչին՝ МОСКВА, Новая Басманная, д. Шибаевой, контора М. Л. Шоршорова, Александру Цатурянь. (№ 65) 4—8